ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Երեք տարի առաջ, նոյեմբերի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսի օծման և գահակալության հանդիսավոր արարողությունը:

Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձը Մայրավանքում նշվեց կիրակի օրը, նոյեմբերի 3-ին, հընթացս Ս. Պատարագի՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նվիրապետական Աթոռների ներկայացուցիչ բարձրաստիճան եկեղեցականների, Հայաստանի և Սփյուռքի թեմական առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ: Պատարագիչն էր Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: Տարեդարձի առիթով թեմական առաջնորդների և եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք, ապա Խաժակ Սրբազանն անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երեք տարիների գործունեությանը՝ մասնավորապես կարևորելով եկեղեցաշինության և հոգևորականության նոր սերնդի պատրաստման ոլորտներում արձանագրված իրագործումները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության երրորդ տարեդարձի առիթով Նորին Սրբությանը շնորհավորական և բարեմաղթանքի իրենց զգացումներն են փոխանցել քույր Եկեղեցիների առաջնորդներ, Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներ, Մայր Աթոռի միաբաններ, պաշտոնեությունը, ինչպես նաև գիտության և մշակույթի գործիչներ:

Նախորդ օրը, հընթացս Հայրապետական մաղթանքի, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ Պապի շնորհավորական գիրն Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց Անդրկովկասյան երկրներում պապական նվիրակ եպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտտին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ